Երեխաների նպաստներ

Բովանդակություն

Ո՞վ կարող է ստանալ երեխաների նպաստները	1
Ի՞նչ պետք է ներկայացնեք երեխաների նպաստ ստանալու համար	2
Նպաստները կարող են շարունակվել մինչև 18 տարին լրանալը	2
Եթե ձեր խնամքի տակ երեխա կա	2
Որքա՞ն նպաստ կարող է վճարվել ընտանիքին	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

2016 թ.-ին մենք ամեն ամիս միջինը 2,6 միլիարդ ԱՄՆ դոլար ենք ծախսել շուրջ 4,3 մլն երեխաների նպաստների վճարման համար, քանի որ նրանց ծնողներից մեկը կամ երկուսն էլ հաշմանդամ, թոշակառու կամ մահացած են: Այդ գումարները օգնում են բավարարել ընտանիքի անդամների կենսական կարիքները և օժանդակում են այդ երեխաների միջնակարգ կրթություն ստանալուն: Երբ ծնողը հաշմանդամություն է ձեռք բերում կամ մահանում է, սոցիալական նպաստն օգնում է կայունացնել ընտանիքի ֆինանսական վիճակը:

ՆՇՈՒՄ. *Հաշմանդամ կամ կույր երեխաները, որոնց ծնողները ունեն ցածր եկամուտ կամ միջոցներ չունեն, նույնպես կարող են լրացուցիչ ապահովության եկամուտների վճարումներ ստանալ: Ծանոթացեք Հաշմանդամություն ունեցող երեխաների նպաստները հրապարակմանը (հրատարակություն No. 05-10026)՝* Benefits for Children With Disabilities *(Publication No. 05-10026):*

Ո՞վ կարող է ստանալ երեխաների նպաստները

Ձեր չամուսնացած երեխան կարող է նպաստներ ստանալ, եթե

- 18 տարին չի լրացել,

- 18-19 տարեկան ուսումնառու է (մինչև 12-րդ դասարանի աշակերտները) կամ
- 18-ից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող երեխան, որի հաշմանդամություն է ձեռք բերել մինչև 22 տարեկան դառնալը:

Որոշ դեպքերում մենք կարող ենք նպաստներ վճարել նաև ձեր խորթ երեխաներին, թոռներին, խորթ թոռներին կամ որդեգրված երեխաներին:

Նպաստ ստանալու համար երեխան պետք է ունենա՝

- Հաշմանդամ կամ թոշակառու ծնող, որն իրավունք ունի սոցիալական ապահովագրության նպաստներ ստանալ, կամ
- Ծնող, որը մահացել է՝ ունենալով բավական երկար աշխատանքային փորձ և վճարել է սոցիալական ապահովության հարկերը:

Ի՞նչ պետք է ներկայացնեք երեխաների նպաստ ստանալու համար

Երբ դիմում եք երեխայի նպաստի համար, ապա ձեզ անհրաժեշտ են երեխայի ծննդյան վկայականը և ծնողի ու երեխայի սոցիալական ապահովության հաշվեհամարները: Նպաստի տեսակից կախված՝ կարող են այլ փաստաթղթեր պահանջվել: Օրինակ, եթե դուք դիմում եք կերակրողին կորցրած երեխայի նպաստ ստանալու համար, պետք է ներկայացնեք ծնողի մահվան վկայականը: Եթե դուք դիմում եք հաշմանդամ երեխայի նպաստ ստանալու համար, ապա պետք է ներկայացնեք երեխայի հաշմանդամությունը հաստատող բժշկական տեղեկանք: Սոցիալական ապահովության ներկայացուցիչը, որին դուք ընտրել եք, կտեղեկացնի ձեզ, թե ինչ փաստաթղթեր են պահանջվում:

Նպաստները կարող են շարունակվել մինչև 18 տարին լրանալը

Նպաստները կդադարեն ձեր երեխայի 18 տարին լրանալուց հետո, եթե նա ուսանող կամ հաշմանդամ չէ:

Եթե ձեր երեխան ուսումնառու է

Ձեր երեխայի 18 տարին լրանալուց երեք ամիս առաջ մենք ձեզ կծանուցենք, որ նպաստների վճարումն ավարտվելու է երեխայի 18 տարին լրանալուց հետո: Նպաստները չեն դադարի, եթե ձեր երեխան ուսումնառու է միջնակարգ (կամ տարրական) դպրոցում: Եթե երեխայի 19 տարին չի լրացել, և նա դեռևս հաճախում է միջնակարգ կամ տարրական դպրոց, ապա նա պետք է տեղեկացնի մեզ այդ մասին: Նա պետք է ներկայացնի դպրոց հաճախելու տեղեկանք՝ պաշտոնապես հաստատված ուսումնական հաստատության կողմից: Նպաստներն այդ դեպքում սովորաբար շարունակվում են մինչև ձեր երեխայի շրջանավարտ դառնալը կամ մինչև երկու ամիս՝ 19 տարեկանը լրանալուց հետո՝ կախված առաջին իրադարձության ամսաթվից:

Եթե ձեր երեխան հաշմանդամ է

Նպաստները պահպանվում են մինչև 18 տարին լրացած հաշմանդամ երեխայի դեպքում: Մանկական հաշմանդամության նպաստների վճարումը չի դադարի 18 տարին լրացած երեխայի համար, եթե նա հաշմանդամություն ձեռք բերի մինչև 22 տարեկանը:

Եթե ձեր խնամքի տակ երեխա կա

Եթե դուք նպաստներ եք ստանում խնամքի տակ երեխա ունենալու համար, ապա ձեր նպաստների դադարեցման ամսաթիվը կարող է տարբերվել երեխայի նպաստների ամսաթվից:

(շրջել)

Եթե երեխան հաշմանդամ չէ, ապա նրա նպաստը կդադարի 16 տարին լրանալուն պես:

Եթե երեխան հաշմանդամ է, ապա ձեր նպաստները կարող են շարունակվել, եթե դուք մտավոր հետամնաց երեխայի ծնողական վերահսկողության և պատասխանատվության պարտավորություններ եք կրում: Ձեր նպաստները կարող են շարունակվել նաև ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երեխային անձնական ծառայություններ մատուցելու դեպքում: Մինչև երեխայի 16 տարին լրանալը մենք ձեզ կծանուցենք այն պայմանների մասին, որոնց դեպքում ձեր նպաստները կշարունակվեն:

Որքա՞ն նպաստ կարող է վճարվել ընտանիքին

Երեխան ընտանիքում կարող է ստանալ լրիվ ծնողական կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստի մինչև կեսի չափը: Եթե երեխան կերակրողին կորցնելու նպաստ է ստանում, ապա նրան կարող է վճարվել մահացած ծնողի սոցիալական ապահովագրության բազային նպաստի մինչև 75 տոկոսը: Այնուամենայնիվ, գոյություն ունի ընտանիքին վճարվող դրամային սահմանաչափ: Ընտանիքի առավելագույն դրամային փոխհատուցումը որոշվում է յուրաքանչյուր սոցիալական ապահովության նպաստի հաշվարկից: Դա կարող է լինել ծնողական նպաստի գումարի 150-ից 180 տոկոսի չափով: Եթե ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր նպաստների գումարը գերազանցում է այս սահմանաչափը, ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի նպաստը մենք նվազեցնում ենք համամասնորեն (բացի ծնողներից), մինչև ընդհանուր գումարը կհամապատասխանի առավելագույն թույլատրելի սահմանաչափին:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

(շրջել)

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: